ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՈՒՐԴ-ԹԱԹԱՐԱԿԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ) ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ 1919 Թ. ԵՎ 1920 Թ. ՍԿԶԲԻՆ

ԷԴԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեն. Թոմսոնի հրամանով գեն. Հովսեփյանցի հայկական զորամասը անգլիական մի ջոկատի ուղեկցությամբ 1919 թ. ապրիլի 23-ին մտավ Կարսի մարզ և մոտեցավ Կարս քաղաքին, որի հայ և թաթար ազգաբնակչությունը նրանց աղ ու հացով դիմավորեց[1]: Հանուն արդարության պետք է նշել, որ Կարս քաղաքի թաթար ազգաբնակչությունը հետագայում ևս դրսևորեց չեզոք վերաբերմունք Հայկական վարչության նկատմամբ՝ ընդհուպ մինչև թուրք-հայկական պատերազմը: Գուցե պատճառը Կարսում հայկական բերդապահ զորքի առկայությունն էր կամ էլ հայ ազգաբնակչության թվական գերազանցությունը (թուրքական արշավանքի հետևանքով 1918 թ. գաղթածները 1919 թ. վերադարձել էին): Ինչևէ, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ո՛չ Կարս քաղաքում, ո՛չ էլ մարզի արևելյան շրջաններում, որոնցում հայկական բնակչությունը զգալի տոկոս էր կազմում, քուրդ-թաթարական ըմբոստություններ համարյա թե չեղան, ինչ չենք ասի Կարսից հյուսիս, արևմուտք և հարավ գտնվող գավառների մասին: Ըստ որում, եթե հյուսիսային շրջաններում (Աղբաբա, Զարուշադ և այլն) բնակվող թաթարներին ոտքի էին հանում Ադրբեջանից եկած գործակալները, ապա հարավում և արևմուտքում (Սարիղամիշ, Կաղզվան, Մերդենեկ) բնակվող քրդերին՝ օսմանյան թուրքերը: Հենց այս՝ քուրդ-թաթարական շարժումներին ու նրանց դեմ ուղղված պայքարին էլ նվիրված է սույն հոդվածը:

Հազիվ 10-15 օր էր անցել հայկական զորքերի Կարսի մարզում հայտնվելուց, հազիվ էին նրանք հաստատվել 1914 թ. ռուս-թուրքական սահմանի այս կողմում, երբ մարզի ամենատարբեր շրջաններից լուրեր են ստացվում հայկական գյուղերի, անգամ զորքերի վրա քուրդ ավազակախմբերի կողմից կատարվող հարձակումների, թալանի, սպանությունների մասին: Այսպես, մայիսի 9-ին Կողբում տեղակայված զորամասի պետը ենթասպա Դոդոխյանին մի քանի զինվորներով ուղարկում է ստուգելու Կողբ-Նարնաուտ ճանապարհի դրությունը, սակայն վերադարձի ճանապարհին Դոդոխյանի խումբը Ալիխանլուի քրդերի կողմից ենթարկվում է գնդակոծության: Ուշագրավ փաստ է արձանագրված երևանյան զորքերի խմբավորման օպերատիվ ամփոփագրում, որ Դրոն

[1] Տե՛ս **Է. Զոհրաբյան**, Թուրք-թաթարական (ադրբեջանական) հակահայկական գործունեությունը 1919 թ. առաջին ամիսներին և Կովկասի բրիտանական հրամանատարությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», № 135.1, 2011, էջ 33-47:

էր կազմել: Պարզվում է, որ այդ գնդակոծության վայրում մնացել էր մի վիրավոր հայ, որին Կաղզվանից Կողբ անցնելիս վերացրել էր մի անգլիացի սպա[2]: Ամփոփագրից չի երևում, թե այդ վիրավոր հայը զինվո՞ր է եղել, թե՞ պատահական ճամփորդ: Բայց ինչ էլ որ լիներ, Դոդոխյանը պետք է պատասխանատվության ենթարկվեր վիրավոր հային դաշտում թողնելու համար: Ինչ վերաբերում է Ալիխանլու քրդական գյուղին պատժելուն, ապա մայիսի 11-ի առավոտյան երկու հայկական վաշտեր մտնում են գյուղ, ձերբակալում 7 քրդերի, բռանագրավում զենք, զինամթերք և այլն[3]:

Թուրք հրահանգիչների կողմից Մերդենեկից հարավ Քյալպինկար, Մեխկերեկ գյուղերում քրդական բանդաների կազմավորման և Ագունդար գյուղից արևմուտք նրանց կենտրոնացման մասին է խոսվում գեն. Սիլիկովին ուղարկած գեն. Հովսեփյանցի մայիսի 15-ի հեռագրում: Տեղեկացնելով, որ այդ բանդաների ստեղծման նպատակը Դերբինսկի շրջանի վրա հարձակումն է, գեն. Հովսեփյանցը միաժամանակ հայտնում է, որ թեև նման հարձակումը համարում է անհնարին, բայցևայնպես նկատի առնելով Մերդենեկի ջոկատի սակավաթվությունը՝ Սարիղամիշից երկու վաշտ (90 զինվոր) է ուղարկել Մերդենեկ[4]: Սակայն շուտով Սարիղամիշի համար է վտանգ ստեղծվում: Երկրորդ բրիգադի շտաբի պետ կապիտան Գրոսսը հեռագրում է զորքերի հրամանատարին, որ Սարիղամիշի ուղղությամբ Էյուբ փաշայի գլխավորած ավազակային բանդան, որի կազմում մինչև 1500 մարդ կա, սկսել է գործել ակտիվորեն, ուստի ինքը որոշել է հունիսի 12-ին Մերդենեկի ջոկատի մի մասը ուղարկել Սարիղամիշին օգնության և հույս ունի ջախջախել Էյուբ փաշայի բանդան[5]:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրդական բանդաները արդեն հունիսին գործում էին խիստ համագործակցված, կապ էին պահպանում միմյանց հետ, տեղեկություն հաղորդում հայկական զորքերի տեղաշարժերի մասին և այլն: Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ Մերդենեկից Սարիղամիշին օգնություն ուղարկելու արդեն հաջորդ օրը՝ հունիսի 13-ին՝ 200 հոգուց բաղկացած մի ջոկատ հարձակում ձեռնարկեց Մերդենեկի ուղղությամբ՝ Կայլի Օգրդարա գյուղի վրա, իսկ 15-ին 300 հոգով հարձակվեցին Մուզարատ գյուղի ուղղությամբ[6]: Ճիշտ է, այդ հարձակումները ետ մղվեցին Մերդենեկից ուղարկված զորամասի ուժերով, բայց փաստն ինքը խոսում է, եթե ոչ քրդական շարժումը մի կենտրոնից ղեկավարվելու, ապա գոնե նրանց միջև կապի առկայության և տեղեկատվություն հաղորդելու մասին:

Գեն. Հախվերդովի 1919 թ. հունիսի 18-ին կազմած օպերատիվ ամփոփագրում ասված է, որ Կոնդ, Սամալեկ, Դորթքիլիսա գյուղերի շրջանում նկատվում է քրդերի կուտակում՝ մոտ 1000 մարդով: Ի դեպ է ասել, որ նախորդ օրը՝ 17-ին, կազմած ամփոփագրում զորքերի հրամանատարին կից շտաբի պետ գեն. Հախվերդովը ավելի ընդարձակ ամփո-

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 18:
[3] Տե՛ս նույն տեղը:
[4] Տե՛ս նույն տեղը, թ. 15:
[5] Տե՛ս նույն տեղը, թ. 43:
[6] Տե՛ս նույն տեղը, թ. 48-49:

փագիր էր կազմել, որում անդրադարձել էր Կաղզվանի, Սարիղամիշի և Մերդենեկի շրջանների դրության հարցին՝ արձանագրելով, որ «Քրդերը շարունակում են հարձակվել հայկական բնակչության վրա: Հունիսի 6-ին քրդերը հարձակվել են Պասլի գյուղից ոչ հեռու՝ Կաղզվանի կիրճում Կարս վերադարձող 5 միլիցիոներների վրա և բոլորին սպանել են: Թուրք սպաները և ասկյարները շարունակում են ագիտացիա մղել մուսուլմանների շրջանում, որ Հայկական կառավարությունը ուզում է ոչնչացնել բոլոր քրդերին, դրա համար էլ լեռներում ապաստանած շատ գյուղեր, որոնք դեռ չեն ազատվել թուրքական կողմնորոշումից, հաճույքով չեն ընդունում Հայկական կառավարության իշխանությունը: Քրդերի առանձին բանդաներ թաքնվում են Գեչեվան, Գյումուշխանա, Օլուխլու, Բաստում, Օրթաչայ, Չենգլի, Խար, Շաբան, Կետե, Ղարաբաղ գյուղերում»[7]: Այնուհետև շեշտելով, որ քրդերի հետ վարվող բանակցությունները դեռևս ոչ մի դրական արդյունք չեն տվել, գեն. Հախվերդովն ավելացնում է, որ հունիսի 10-ին Թուրքաշեն գյուղի մոտ բռնված թուրք ասկյարը ասել է, որ թուրք սպաները հավաքագրում են տեղացի մուսուլմաններին հայերի դեմ թշնամական գործողությունների նպատակով: «Քարոզչությունը Թուրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է, - ասված է բանակի գլխավոր շտաբի հունիսի 17-ի գաղտնի զեկուցագրում: - Այդ նպատակով մեծ քանակությամբ թուրք գործակալներ են ուղարկված Հայաստանի ներսերը, մահմեդական գյուղերը և ամեն տեղ հայտնաբերվում են մեր վարչության և հակահետախուզության կողմից: **Մասնավորապես զորավոր է թուրք գործակալների ազդեցությունը Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիրներով զինված քրդական հրոսակախմբեր: Նույն պատրաստությունը կատարվում է և՛ Սարիղամիշ - Կաղզվան տարածության վրա, և՛ ավելի հեռուները՝ Բարթողյան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում մինչև Արարատ**»[8] (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Հասկանալի է, որ Հայաստանի կառավարությունը այս ամենի մասին պետք է հայտներ դաշնակիցներին և հայտնում էր: Բայց վերջիններս ոչ միայն միջոցներ չէին ձեռնարկում, այլև հանգստացնում էին հայերին, թե թուրքերը ի վիճակի չեն լուրջ վտանգ ստեղծելու: Ահա օրինակ, ինչ է ասված Ալ. Խատիսյանին ուղարկած գեն. Կորիի հունիսի 19-ի նամակում. «Ես անհապաղ կզեկուցեմ Բարձր հրամանատարությանը Ձեր հաղորդումները թուրքական գործակալների վերսկսված գործունեության մասին: **Սակայն ես կուզեի հիշեցնել Ձեզ, որ երբեմնի թուրքական մեծ ազգը այժմ հիմնավորապես ջախջախված է, որ նա չունի ո՛չ բանակ, ո՛չ ռազմամթերք, ո՛չ որևէ ուժ, և ինչպես չաշխատեն նրա գործակալները, նրանք վճռականապես ոչնչի չեն հասնի**... »[9] (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Դժվար է ասել, թե սա բրիտանական հրամանատարության համոզվածությունն էր, թե ասված էր հայերին հանգստացնելու համար: Բայցևայնպես մի բան անհերքելի է, դա այն է, որ Անդրկովկասի բրի-

---

[7] Նույն տեղում, թ. 48:
[8] **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետությունը, Եր., 1993, էջ 314:
[9] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 120, թ. 134:

տանական հրամանատարությունը շարունակեց մնալ դիտողի դերում, իսկ թուրք-ադրբեջանական հակահայկական քարոզչությունը օր օրի ծավալվում էր ու սպառնալից տեսք ստանում: Եվ արդեն հուլիսին այն պայթեց համաիսլամական շարժման ձևով՝ սկիզբ առնելով Շարուր-Նախիջևանում և այնուհետև ներառելով Մերդենեկ-Կարակուրտի, Սարիղամիշի, Կաղզվանի և հարակից շրջանների մուսուլմաններին՝ քրդերին: Շարուր-Նախիջևանում ծագած ապստամբության մասին մանրամասն ներկայացված է դեռևս 2002 թ. լույս տեսած մեր գրքում[10], իսկ այժմ անդրադառնանք մեր գրքում տեղ չգտած որոշ փաստերի, որոնք տեղի են ունեցել հուլիսի առաջին օրերին:

Հուլիսի 7-ին գեն. Փիրումովը հաղորդում է, որ հուլիսի 6-ին Սարիղամիշից Կարակուրտ ուղարկված երկու վաշտերը Սարիղամիշից 15 վերստ հեռավորության վրա հարձակման են ենթարկվել 200 քրդերի կողմից, որ Կարակուրտի մոտ մարտը շարունակվում է, և որ նույն 6-ին քրդերը մտել են Մեչետլի գյուղը և թալանել[11]: Համաձայն զորքերի ընդհանուր հրամանատարի գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գնդ. Զինկևիչի կազմած ամփոփագրի՝ ամսի 8-ին քրդերը նորից հարձակվել են Մեչետլի գյուղի վրա, բայց տալով 50 զոհ՝ հետ են փախել և 9-ին ուղարկել սուրհանդակներ՝ խնդրելով վերջ տալ կռիվներին և խոստանալով անհապաղ ուղարկել ամեն մի գյուղից երկուական վստահելի քրդերի՝ բանակցելու համար: Ինչ վերաբերում է քրդերի հետ տարված բանակցություններին, ապա Կարսի նահանգապետ Ղորղանյանը (Կորգանով) ներքին գործերի մինիստրին ուղարկած հուլիսի 12-ի հեռագրում տեղեկացնում է, որ «քրդերը ուղարկել են ներկայացուցիչներ: Մենք ներկայացրել ենք հետևյալ պահանջները. գերիների վերադարձ, զինաթափում, հրահրողների հանձնում, վնասների հատուցում, որի համար տրվել է մեկ օր ժամանակ»[12]: Բայց, ինչպես երևում է, քրդերը չեն կատարել այս պայմանները կամ էլ դիտավորյալ ձգձգել են, ինչի մասին է վկայում բանակի հրամանատարին ուղարկած գեն. Փիրումյանի հուլիսի 27 հեռագիրը, որտեղ խոսվում է գեն. Հովսեփյանցի նույնանման պահանջների մասին քուրդ ղեկավարներին[13]:

Հուլիսյան այդ օրերին աշխուժություն է դրսևորում նաև իրեն քրդերի առաջնորդ համարող Էյուբ փաշան: Հուլիսի 21-ին բանակի հրամանատարի շտաբի կազմած ամփոփագրում ասված է, որ Էյուբ փաշայի բանդան հուլիսի 19-ից 20-ի գիշերը հարձակում է գործել Վերիշեն գյուղի վրա, որտեղ շարունակվում են կռիվները[14]: Իսկ հուլիսի 15-ի ամփոփագրում, որը դարձյալ կազմել է գնդ. Զինկևիչը, ասված է, որ ըստ լուրերի՝ Էյուբ փաշան թուրք սպաների մասնակցությամբ որոշել է թույլ չտալ հայերի մուտքը Օլթիի շրջան, որ նա Բարդուսի շրջանում զորահավաք է հայտարարել, որ նա ունի երկու լեռնային թնդանոթ և այլն[15]:

---

[10] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», 1918 թ. դեկտեմբեր- 1920 թ. ապրիլ, Եր., 2002:

[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 83:

[12] Նույն տեղում, թ. 91:

[13] Տե՛ս նույն տեղը, թ. 114:

[14] Տե՛ս նույն տեղը, թ. 107:

[15] Տե՛ս նույն տեղը, թ. 95:

Հաջողության հասնելով Շարուր-Նախիջևանում հուլիսի երկրորդ կեսին՝ մահմեդականությունը օգոստոսին ընդհանուր գրոհ ձեռնարկեց Հայաստանի դեմ՝ փորձելով այն օղակել երեք կողմերից: Օգոստոսի առաջին օրերին համառ կռիվներ ծավալվեցին Բեյուք-Վեդիում, Սուրմալուում, Կաղզվանում, Սարիղամիշում և ամբողջ արևմտյան ճակատի երկարությամբ: Օգոստոսի 6-ին թուրք-թաթարական հրոսակախմբերը հարձակվում են Իգդիրի շրջանի Արազ-Գյոլ գյուղի վրա, որի բնակիչները ստիպված հեռանում են Մոլլա-Ղամար գյուղը: Իսկ քրդերը հարձակվում են Սարիղամիշի ուղղությամբ, բայց շրջակա իշխող բարձունքներում ամրացած մեր զինվորներին հաջողվում է հետ շպրտել գրոհողներին[16]: Օգոստոսի 10-ին քրդերը հարձակվում են նաև Ասլանլու գյուղի վրա, բայց հաջողություն չեն ունենում: Այդ նույն օրը քրդերը հարձակվում են նաև Աբաս-Գյոլ գյուղի վրա (Իգդիրի շրջան), որտեղ մարտերը տևում են մի քանի օր, և ի վերջո քրդերին հաջողվում է գրավել Աբաս-Գյոլի շրջանը[17]: Օգոստոսի 7-ից փոփոխակի հաջողություններով կռիվներ են ծավալվում նաև Կողբի և Դաշբուրունի շրջաններում:

Այսպիսին էր իրադրությունը ռազմաճակատներում օգոստոսի կեսերին: Ստեղծվել էր խիստ ծանր, օրհասական վիճակ: Թշնամին փաստորեն օղակել էր հանրապետությունը երեք կողմերից: Եվ այսպիսի պայմաններում Փարիզից պաշտոնական լուր ստացվեց, որ օգոստոսի 15-ին բրիտանական զորքերը հեռանում են Անդրկովկասից: Օգոստոսի 8-ին Փարիզի վեհաժողովի նախագահ Կլեմանսոյին ուղարկած հեռագրում, բողոքելով բրիտանական զորքերի հեռացման մասին Վեհաժողովի որոշման դեմ, վարչապետ Խատիսյանը գրում է. «Թուրք-թաթարական շարժումը արդեն սկսում է սպառնալ հայ ժողովրդի գոյությանը: Բրիտանական ուժերի ներկայությունը մասամբ զսպում է այդ շարժումը: Նրանց հեռացումով անխուսափելի աղետ կսկսվի: …Մարդկային արդարության և Հայաստանի գոյության անունից պահանջում եմ շտապ և եռանդուն միջոցներ ձեռք առնել աղետից խուսափելու համար»[18]:

Թե որքանով էր Եվրոպան մարդկային արդարության ջատագով, Խատիսյանին վաղուց հայտնի էր: Բայց այս անգամ նա առիթ ունեցավ համոզվելու, որ Հայաստանի գոյությունը ևս Եվրոպային շատ քիչ է հետաքրքրում: Անցնում են օրերը, իսկ Վեհաժողովից որևէ պատասխան չկա: Իրական օգնությունը զորք ուղարկելը կլիներ, բայց, ինչպես տեսանք, այդ նույն Վեհաժողովի որոշումով էին բրիտանական զորքերը հեռանում Անդրկովկասից: Չնայած դրան՝ օգոստոսի 15-ին գումարված Հայաստանի խորհրդարանի արտակարգ նիստը որոշեց մեկ անգամ ևս դիմել Փարիզի Վեհաժողովին և դաշնակից տերությունների խորհրդարաններին: Ժամանակակիցները այդ նիստը նմանեցրել են սգահանդեսի: Ծանր ու ճնշող էր այն տպավորությունը, որ ստեղծվել էր վարչապետին փոխարինած Ս. Սահակյանի զեկուցման հետևանքով: Ներկայացվել

[16] Տե՛ս «Աշխատանք», 14 օգոստոսի 1919 թ.:
[17] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 14 օգոստոսի 1919 թ.:
[18] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 201, թ. 72:

էին այնպիսի փաստեր, ռազմաճակատներում տիրող դրությունը նկարագրվել էր այնպիսի գույներով, որ ամենքին հուսահատություն էր պատել: «Մենք հետզհետե շրջապատվում ենք երկաթե օղակով: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը, - ասված է զեկուցման մեջ: - Կառավարությունը բավարար չգտնելով ներկա զինվորական ուժը, կոչ է անում ժողովրդին զոհաբերել իր գույքն ու կյանքը»[19]: Այնուհետև նշելով, որ Օսմանյան Թուրքիան ամիսներ շարունակ իր գործակալների միջոցով տեղական մահմեդականներին հայկական կառավարության դեմ գրգռելուց հետո այսօր նա, իր սպաներով և ասկյարներով քրդական ու թաթարական հրոսակախմբերի գլուխն անցած, հիմնահատակ է անում գյուղերն ու ավանները, Ծարուրի, Նախիջևանի, Սուրմալուի, Երևանի և Կարսի գավառներում կոտորում է հայ ժողովրդի մնացորդները, ուստի հայ ժողովուրդն «այսօր կանգնած է իր դարավոր դահճի դիմաց մեն-մենակ՝ առանց դաշնակից զորքերի, առանց բավարար քանակությամբ զինամթերքի ու ռազմական ուժերի», հետևաբար նրան «**այլ բան չի մնում, քան քաղաքակիրթ մարդկության խղճին և մտքին հասցնել իր օրհասի գույժը և պատվավոր մահվան վճռականությամբ ընդառաջել իր ծանր ճակատագրին**»[20] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Վեհաժողովը զորք ուղարկել չէր կարող և չուղարկեց էլ, ոչ էլ փոխեց իր որոշումը Անդրկովկասից բրիտանական զորքերը դուրս բերելու վերաբերյալ: Դրա փոխարեն որոշեց Հայաստան ուղարկել ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելին՝ որպես Հայաստանի կոմիսար: Հասկելը Երևան հասավ օգոստոսի 21-ին, 22-ին ելույթ ունեցավ խորհրդարանում՝ խոստանալով հարկադրել Ադրբեջանին վերջ տալու հակահայկական գործողություններին: Նրա ելույթը մեծ խանդավառություն առաջացրեց խորհրդարանում, քանի որ նա խոստացել էր կազմակերպել Հայաստանի պարենավորումը, օգնել զենքի և զինամթերքի հարցում և այլն: 23-ին Հասկելը մեկնեց Թիֆլիս՝ այնտեղից Բաքու անցնելու և Ադրբեջանի կառավարության հետ բանակցելու համար: Բայց շուտով պարզվեց, որ նա Բաքվում բանակցել է ոչ թե Ծարուր-Նախիջևանը Հայաստանին վերադարձնելու, այլ ամերիկյան գեներալ-նահանգապետություն ստեղծելու շուրջ, որն այդպես էլ չիրագործվեց: Ինչպես նաև չդադարեցին ո՛չ ադրբեջանական և ո՛չ էլ թուրք գործակալների հակահայկական խժդժությունները:

Դեռ օգոստոսի 18-ին քրդերը մթության քողի տակ գրավում են իշխող բարձրունքները Կաղզվանի շուրջը և կրակ բացում Կաղզվանի ջոկատի վրա, և միայն լույսը բացվելուց հետո հրետանու օգնությամբ հաջողվում է քշել քրդերին[21]: Օգոստոսի 25-ին քրդական մի հրոսակախումբ հարձակում է գործում Սարիղամիշի ուղղությամբ՝ Մելիգյուզ գյուղի վրա[22], իսկ 29-ին քուրդ ղեկավարները վերջնագիր են ներկայացնում Կաղզվանի շրջանը 16 ժամվա ընթացքում մաքրելու մասին[23]: Ըստ

[19] **Ս. Վրացյան**, նշվ. աշխ., էջ 318:
[20] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 34, թ. 2-3:
[21] Տե՛ս նույն տեղը, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 123:
[22] Տե՛ս նույն տեղը, թ. 138:
[23] Տե՛ս նույն տեղը, թ. 141:

երևույթին դրանք հենց այն քուրդ ղեկավարներն էին, որոնք հավաքվել էին Սարիբուլախի շրջանի Ախչայ գյուղում և որոշում կայացրել իրենց ուժերով դուրս քշել հայերին Կաղզվանից և Խորասանից՝ ստեղծելով այնտեղ սեփական կառավարություն: Քրդերի այդ որոշման մասին Կարսի նահանգապետին հայտնել էր անգլիացի կապիտան Պրեսսորը, որը Սուրմալու մեկնելու ճանապարհին եղել էր Կաղզվանում, իսկ նահանգապետն էլ իր հերթին «գաղտնի» շիֆրով հեռագրել էր ներքին գործերի մինիստրին: Հետաքրքիր է, որ նահանգապետի այն հարցին, թե կարո՞ղ ենք դիմագրավել Ախչայ-Սարիբուլախի քրդերին, անգլիացի սպան դրական պատասխան էր տվել՝ պայմանով, որ եթե Կաղզվանում կենտրոնացվի ոչ պակաս 8 հրետանի և համապատասխան թվով զինվորներ[24]:

Ահա թե որքան էին լկտիացել քրդերը: Դրան ի պատասխան՝ Սարիղամիշի հայկական զորամասի հրամանատարությունը հանձնարարություն ստացավ Սարիղամիշ-Կարս ճանապարհի վերջնական ապահովման նպատակով հարձակում սկսել Կարակուրտի և Դևիկի ուղղությամբ: Հարձակումը սկսվեց օգոստոսի 29-ին: Այդ մասին բանակի հրամանատարի շտաբ ներկայացված սեպտեմբերի 1-ի ամփոփագրում ասված է. «Կարակուրտի ջոկատը հարձակումը սկսեց ժամը 7-ին և արդեն 11-ին գրավեց Կարակուրտը: Քուրդ հրոսակախմբերը, որոնք ղեկավարվում էին թուրք սպաների և ասկյարների կողմից, երկուժամյա համառ դիմադրությունից և մեծ կորուստներ տալուց հետո փախան Բաշկյոյ գյուղը: Մերոնք հետապնդեցին հակառակորդին, որը ժամը 16-ի մոտ վերջնականապես ջախջախվեց և թողեց Բաշկյոյի դիրքերը: Դևիկի ջոկատը հարձակումը սկսեց ժամը 11-ին: Հակառակորդի առաջապահ մասերը դուրս քշվեցին մեր կողմից և ժամը 15-ի մոտ մերոնք գրավեցին Էմիրխան և Ներքին Սալուտ գյուղերի միջև լեռնաշղթայի գիծը: Հակառակորդը խուճապահար փախավ: Մեր զորքերը ներկայումս զբաղեցնում են Վերսման գյուղի վերին դիրքերը»[25]:

Սեպտեմբեր-դեկտեմբերին Կարսի մարզում քրդական շարժումը որոշ չափով թուլանում է: Սեպտեմբերի համար ռազմական ամփոփագրում նշված է միայն մի դեպք. սեպտեմբերի 18-ին զինվորական հետախուզությունը Կաղզվանից արևելք Խըղնասար, Ջագիկ և Կիզիլ-քիլիսա գյուղերում հայտնաբերում է քրդական հրոսակախմբեր և կարճատև հրաձգությունից հետո գրավում այդ գյուղերը, իսկ քրդերին քշում լեռները[26]: Հոկտեմբերի համար ևս մի դեպք է նշված. հոկտեմբերի 11-ին փոխգնդապետ Շաղուբատովի գլխավորությամբ մի ջոկատ է ուղարկվում Տոդան գյուղը, որտեղ գտնվում էր քուրդ առաջնորդ Ալի-Ռզայի շտաբը: Համառ կռիվներից հետո ջոկատին հաջողվում է գրավել գյուղը և հրդեհել: Քրդերը փախչում են Չուխուր-Չան լեռան ուղղությամբ: Ջոկատի ձեռքն են ընկնում փաստաթղթեր, թուրքական ժանդարմների ուսադիրներ և մեկ թուրք ասկյար[27]: Նոյեմբերի 7-ին Բալըխ-

[24] Տե՛ս նույն տեղը, ֆ. 201, g. 1, գ.2, թ. 16:
[25] Նույն տեղում, թ. 144:
[26] Տե՛ս նույն տեղը, թ. 151:
[27] Տե՛ս նույն տեղը, թ. 173:

լը գյուղի ուղղությամբ (Սարիղամիշի շրջան) ուղարկված հետախուզական խումբը գնդակոծվում է քրդերի կողմից, որից հետո Բաշկյոյի տեղամասի պետը կազմակերպում է հարձակում և քրդերին քշում դեպի Կազան, Օրտա-Կալա և Չերմալի գյուղերը[28]: Վերջապես, դեկտեմբերի 22-ի համար կազմած ամփոփագրում ասված է, որ Կազըկայա գյուղից քրդերը հարձակում են գործել Արմատլը-Բաշկյոյի ուղղությամբ (Կարակուրտի շրջան), բայց մեծ կորուստներ տալուց հետո նահանջել են[29]:

Հետաքրքրական է, որ հոկտեմբերին կազմված երկու փաստաթղթում խոսվում է նաև Օլթիի գավառի գրավման համար հայկական զորքերի կենտրոնացման մասին: Բանն այն է, որ ըստ ապրիլի 14-ին գեն. Թոմսոնի կազմած և Հայաստանի ու Վրաստանի կառավարություններին ներկայացրած ժամանակավոր սահմանագծի (մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական որոշումը)՝ Կարսի մարզից միմիայն Կարսի և Կաղզվանի գավառներն էին տրվում Հայաստանին, իսկ Օլթիի գավառը և Արդահանի օկրուգի Քուռ գետի աջափնյա հատվածը դրվում էր Բաթումի նահանգապետի տիրապետության տակ (Քուռ գետի ձախափնյա հատվածը և ներառյալ Արդահան քաղաքը տրվում էին Վրաստանին)[30]: Բայց ինչպես երևում է, Բաթումի անգլիացի նահանգապետը դժվարացել է հիմնականում քրդերով բնակեցված Օլթիի հարցում և համաձայնել, որ այդ գավառի կառավարումը հանձնվի Հայաստանին: Հայկական զորքերի հրամանատարին ուղարկած 2-րդ բրիգադի շտաբի պետ կապիտան Գրոսսի 1919 թ. հունիսի 12-ի հեռագրում ասված է, որ «Օլթիի օկրուգի վերաբերյալ անգլիական հրամանատարության և մեր վարչության անորոշ դիրեկտիվների պատճառով մինչև այժմ չեմ կարող ակտիվ գործել Օլթիի ուղղությամբ: Բոլոր երեք ջոկատներում մեկական անգլիացի սպա կա: Ես ձեռնպահ եմ մնում ակտիվ գործողություններից, քանի որ թուրք պրովակատորները լուրեր են տարածում, որ իբր հայերը մորթում են մուսուլմաններին և դրանով դժվարեցնում են մեր տարածքների գրավումը»[31]:

Այսպես էր Օլթիի հարցը հունիսին: Բայց, ինչպես երևում է, հոկտեմբերին դրությունը փոխվել էր: Այդ է վկայում գեն. Փիրումովի (Փիրումյան) Երևան՝ բանակի հրամանատարին ուղարկած հոկտեմբերի 20-ի հեռագիրը, որտեղ խոսվում է այն մասին, որ «Օլթիի գրավման համար գեն. Հովսեփյանցի գլխավորած զորամասը այսօր կենտրոնացել է Մերդենեկում»[32]: Ճիշտ է, իսկույն ևեթ շեշտում է, որ չարամիտ մարդիկ արդեն հասցրել են Օլթիում տարածել լուրեր, որ հայկական զորքերը գալիս են մուսուլմաններին բնաջնջելու, և որ բնակչության մեջ աշխատանքներ տանելու նպատակով գործուղում են մեծապատիվ մուսուլմաններ, և որ զորքերը առաջ կանցնեն միմիայն գործուղվածների վերադարձից հետո: Հեռագրում Փիրումովը խոսում է նաև Էյուբ փաշային Կարս հրավիրելու, նրա հետ Օլթին գրավելու շուրջ բանակցելու

[28] Տե՛ս նույն տեղը, թ. 189:
[29] Տե՛ս նույն տեղը, թ. 47:
[30] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1-2, էջ 90-91:
[31] ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 50, թ. 43:
[32] Նույն տեղում, թ. 177:

և խնդրում կառավարությանը թույլ տալ իրեն Էյուբ փաշայի կողմից իր պայմաններն ընդունելու դեպքում նրան գնդապետի աստիճան շնորհել: Սակայն հայակական կողմի այս ցանկությունները չիրականացան. հոկտեմբերի 27-ին գեն. Հախվերդյանի կազմած ամփոփագրում ասված է. «Բանակցությունների նպատակով Օլթի ուղարկած պատվիրակությունը ձերբակալված է Օլթիի կոմիտեի կողմից»[33]:

Դատելով արխիվային փաստաթղթերից՝ քրդական շարժումը 1920 թ. զգալիորեն նվազել է: Համենայնդեպս մինչև Հայկական զորքերի կողմից Օլթիի գրավումը (1920 թ. հունիսի 18) արխիվներում 3-4 փաստաթուղթ է պահպանվել քրդական շարժումների մասին: Դրանցից առաջինը գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ կապիտան Մուրադխանյանի 1920 թ. հունվարի 22-ի գաղտնի զեկուցումն է, որտեղ ասված է, որ «մեզ թշնամի քրդական հրոսակախմբերի կազմակերպիչ Սելիմը 1000 հեծյալներով (մտավ) Խորոշևկա և պահանջեց քրդա-թաթարներից իր տրամադրության տակ դնել բոլոր հեծյալներին, բացի այդ պահանջեց ռուսներից միանալ իրեն, բայց վերջիններս հրաժարվեցին»[34]: Այնուհետև շեշտելով, որ այստեղ տենդորեն նախապատրաստություն է գնում, և նորից դրսևորվում է հակահայկական շարժումը, Մուրադխանյանը անդրադառնում է նաև Զարուշադի շրջանի և Օլթիի քրդերին: Պարզվում է, որ Զարուշադում քրդերի միջև համերաշխություն չկա և երկու մասի բաժանված՝ պայքարում են միմյանց դեմ, իսկ Օլթիում Հայաստանի կողմնակից Իզո-բեկի դիրքերը թուլացել են, քանի որ համաձայնություն չի կայացել օկրուգի ազգաբնակչության և Իզո-բեկի միջև վարչության ու ժանդարմերիայի ծախսերը հոգալու հարցում:

Հաջորդ գաղտնի զեկուցագիրը կազմվել է փետրվարի 7-ին[35]: Այնտեղ խոսվում է այն մասին, որ Բերդիկ և Կալանջիկ գյուղերի քրդերը Ռասաբեկի գլխավորությամբ որոշել էին հնազանդության առաջարկով դիմել Հայաստանի կառավարությանը, բայց դրան խանգարեց մեր հակառակորդ Սելիմը: Նաև հայտնվում է, որ, ըստ լուրերի, Էյուբ փաշան ստացած վերքերից մահացել է Էրզրումում:

Ավելի ընդարձակ զեկուցագիր է ուղարկել Ալեքսանդրապոլ գեն. Փիրումովը ապրիլի 7-ին տեղի ունեցած քրդական հարձակումների մասին՝ Սարիղամիշի և Օլթիի ուղղություններով[36]: Գեներալը հայտնում է, որ ապրիլի 7-ին քրդերը հարձակում են գործել Սարիղամիշի ուղղությամբ՝ Սաաթ-Վերան գյուղի վրա: Կամավորական վաշտը հետ է շպրտել հարձակվողներին, բայց հետո փամփուշտների բացակայության պատճառով հարկադրված է եղել հետ քաշվել դեպի Կլյանտան: Նաև տեղեկացնում է, որ Կարակուրտի շրջանից Կաղզվան ուղարկված միլիցիոներներին Տասան բեկի քրդերը թույլ չեն տվել անցնել: Ինչ վերաբերում է Օլթիի ուղղությանը, ապա նույն օրը՝ ապրիլի 7-ին, քրդերը և թուրքերը մոտ 300 հոգով հարձակման են անցել՝ Կեմարից հարավ-արևմուտք գտնվող 1133

[33] Նույն տեղում, թ. 180:
[34] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 441, թ. 31:
[35] Տե՛ս նույն տեղը, թ. 32:
[36] Տե՛ս նույն տեղը, թ. 133:

բարձունքը գրավելու նպատակով, բայց Կեմարի պահակախմբի կողմից ետ են շպրտվել: Կորովենկայից հարձակվող քրդերին օգնության են եկել մոտ 100 քրդեր, որոնք փորձել են գրավել Դադուշենից արևմուտք գտնվող բարձունքը, բայց նմանապես ստիպված են եղել հետ նահանջելու:

Գաղտնի ամփոփագիր է կազմված Կարսի մարզի վերաբերյալ մայիսի 23-ին, որում խոսվում է նաև Օլթիում տիրող դրության մասին[37]: Նշված է, որ թուրքական կանոնավոր զորքեր Օլթիում չկան, այլ կան հայդուկներ և պահեստային ասկյարներ, և որ Օլթիի օկրուգում զորահավաքը տվել է 1200 մարդ՝ չհաշված Թուրքիայից եկած ասկյարներին և հայդուկներին, որոնց ընդհանուր թիվը 500 է և որոնք հիմնականում կենտրոնացած են Կոսորում, Փենյակում, Մոշեղում և Ադուդիրում: Իսկ Օլթիի օկրուգի սահմանները պահպանում են 500-600 հայդուկներ, որոնք ունեն ռուսական արտադրության 2 լեռնային թնդանոթ, 7 գնդացիր (4-ը «Լուիս» տիպի և 3-ը՝ «Մաքսիմ»):

Ինչպես արդեն նշել ենք, հայկական զորքերի կողմից Օլթիի գրավումը տեղի ունեցավ հունիսի 18-ին: Այդ օրը հայկական կանոնավոր զորքերի հետ մեկտեղ Օլթի մտավ նաև կամավորական սկզբունքով կազմավորված զորամասը (մոտ 1000 հոգի) և սկսեց տեղի ազգաբնակչության նկատմամբ թալանն ու բռնությունները, որի մասին պերճախոս վկայություն կա ներքին գործերի մինիստրին ներկայացրած Կարսի նահանգապետի զեկուցագրում[38]: Կարդալով այս զեկուցագիրը՝ հասկանում ես, թե որքան հակասական էին հարաբերությունները նահանգապետի և Կարսի մարզում գործող զորքերի հրամանատարության միջև: Չկար կապ, չկար փոխհամաձայնություն, նահանգապետը մեկուսացված էր գործերից: Մի ուշագրավ փաստաթուղթ է պահպանվել արխիվում՝ թվագրված հուլիսի 5-ով, որտեղ ասվում է. «Ներքգործ և զինմին Ռուբեն Տեր-Մինասյանի կարգադրությամբ հայտնում եմ, որ գեներալ Փիրումովի համաձայնությամբ կարող եք ետ կանչել ադմինիստրացիան Կոսսորից՝ ևս նկատելով այդ շրջանը զինվորական թատերաբեմ»[39]:

Թե ինչու քաղաքացիական վարչության դուրսբերումը Օլթիից պետք է կատարվի Կարսի բերդապահ զորքերի հրամանատար գեն. Փիրումովի համաձայնությամբ, դա Ռուբեն Տեր-Մինասյանի գաղտնիքն է: Բայց որ այդ գաղտնիքը պետք է առաջ բերեր նահանգապետ Կորգանովի (Ղորղանյան) դժգոհությունը, դա արդեն գաղտնիք չէր, քանի որ Կոսսորի քաղաքացիական վարչությունը իր վերահսկողության տակ էր գործում: Փոխադարձ անվստահության փաստ է նաև այն, որ երբ Օլթին գրավելուց երկու շաբաթ անց 2-րդ բրիգադի հրամանատարը առաջարկում է Օլթիի հույներին գաղթեցնել դեպի Կարս՝ որպես պատանդ, և նաև պաշտոնանկ անել գավառապետ Իզո-բեկին, ապա նահանգապետը մերժում է երկու պահանջներն էլ ու խորհուրդ տալիս վերջ տալ թալանին ու բռնություններին և դրանով իսկ վերացնել կասկածները ինչ-որ դավերի մասին[40]:

---

[37] Տե՛ս նույն տեղը, թ. 122:
[38] Տե՛ս նույն տեղը, ֆ. 201, ց. 2, գ. 636, թ. 18-22:
[39] Նույն տեղում, ց. 1, գ. 48, թ. 166:
[40] Տե՛ս նույն տեղը, ց. 2, գ. 636, թ. 26:

Նահանգապետ Ղորղանյանը դավադրություն է տեսնում նաև Կարսի մարզի Աղբաբայի շրջանը Կարսի մարզից անջատելու և Ալեքսանդրապոլի նահանգին միացնելու մեջ: Նա գրում է. «Երկաթուղու գիծը, ճիշտ է, մաքրվեց թրքությունից[41], բայց թուրքերն անցան լեռները զինված, կողոպտված և վրեժխնդիր: Թալանն այդ օրերում առասպելական էր, պաշտոնական դիմակի տակ մարդիկ գալիս էին կեղեքելու և հարստանալու և ինձ պետք չէ ասել, որ այդ առանցքում խախտվում էին պետական հիմունքները և իրավակարգը արմատորեն կազմալուծվում էր: Բայց շատ բնորոշ է, որ ալան-թալանի առանցքում, ուր տանող-տանողի էր, Ալեքսանդրապոլի վակզալում ինչ-որ քաղաքագլուխների ու զորավարների մասնակցությամբ վճռվում է Կարսի նահանգի Աղբաբա գավառամասը կցել Ալեքսանդրապոլի գավառին: **Այդ մեծ ու երկրի համար նշանավոր խնդիրը լուծելիս Ալեքսանդրապոլի վակզալի հեղինակավոր խորհրդակցությունը հարկավ չհամարեց Կարսի նահանգապետի կարծիքը այդ առթիվ հարցնելու: Սա արվեց իբր Աղբաբայի թրքությունը թուլացնելու նպատակով**: Աղբաբան առանձնացավ և Ալեքսանդրապոլի իշխանությունը նույնքան տեղյակ է Աղբաբայի անցուդարձից, որքան ես Մարսի կյանքից: Եվ այդպես, որ կողմից էլ մոտենալու լինենք Աղբաբան Կարսի **նահանգից անջատելու խնդրին, մի բան անվիճելի կմնա, Աղբաբան առանձնացավ իսպառ, վարչական կապը նրա հետ դարձավ ավելի փոքր, քան նորմալ**»[42] (ընդգծումը մերն է - Է. Ձ.):

Ինչ խոսք, որ իրավացի կլիներ նահանգապետը, եթե նա անտեղյակ լիներ Աղբաբան անջատելու տրամադրության առկայությանը կառավարությունում: Բայց բանն էլ հենց այն է, որ ներքին գործերի մինիստրի տեղակալ Մանասյանը նախապես տեղյակ էր պահել ու նաև հարցրել նրա կարծիքը: «Մանասյանը սույն հարցի մասին խոսել է նաև Կորգանովի հետ,- ասված է կառավարություն ուղարկած ներքին գործերի մինիստրի զեկուցագրում, -վերջինս դեմ է, սակայն ուրիշ պատճառաբանություն չի բերում, բացի այն, որ 40 տարի այդպես է եղել, այսինքն այդ եռանկյունին (Աղբաբայի Կարսի մարզից անջատվող մասը - Է. Ձ.) Կարսի նահանգի մեջ է համարվել»[43]: Իսկ ներքին գործերի մինիստրը հետևյալ բացատրությունն է տվել կատարվածի մասին. «1920 թ. մարտի 3-ին իմ օգնական Մանասյանը Ալեքսանդրապոլում խորհրդակցություն է ունեցել գեներալ Փիրումովի, նրա շտաբի պետի, Ալեքսանդրապոլի և Կարսի քաղաքագլուխների ու գավառական կոմիսարի հետ այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են այդ գավառում խաղաղությունը մշտապես պահպանելու համար:

Խորհրդակցությունը անհրաժեշտ է գտել, որ Կարսի նահանգի մի մասը, որ մոտ է Ալեքսանդրապոլին, կցվի Ալեքսանդրապոլի գավառին հետևյալ սահմանով. սկսած այն կետից ուր միանում են Արփաչայն ու Կարսչայը, Կարսչայով բարձրացած մինչև Շահնալար ու այնտեղից Կարախանչայով բարձրացած մինչև Ախալքալաքի սահմանը. Մանա-

[41] Խոսքը Ալեքսանդրապոլ-Կարս երկաթգծի մասին է:
[42] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 636, թ. 16:
[43] Նույն տեղում, ց. 1, գ. 48, թ. 64:

վանդ որ զինվորական տեսակետից այդ եռանկյունին ենթակա է Ալեքսանդրապոլի հրամանատարին: Անկախ մյուս պատճառներից, դա անհրաժեշտ է այս անցողակի շրջանի համար, որպեսզի զինվորական և ադմինիստրատիվ իշխանությունները կարողանան խորհրդակցել և համերաշխությամբ վարել գործը: Դա անհրաժեշտ է նաև Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանության համար»[44]: Վերջում խնդրում է կառավարությանը տալ իր որոշումը այդ հարցի առթիվ շուտափույթ կարգադրություն անելու համար:

Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդրապոլի խորհրդակցությունը բավականաչափ հիմնավոր պատճառներ ուներ, եթե նշվածներին ավելացնենք նաև Աղբաբայի թրքությանը Կարսի թրքությունից անջատելը՝ նման որոշում ընդունելու համար: Այնպես որ նահանգապետի դժգոհությունը անտեղի և անիմաստ է: Եվ թե որքան շահագրգռված էր կառավարությունը Աղբաբայի շրջանի այդ եռանկյունի մասը Կարսի նահանգից կտրելու և Ալեքսանդրապոլի գավառին միացնելու հարցում, վկայում է թեկուզ այն փաստը, որ ներքին գործերի մինիստրի զեկուցագիրը ստանալուց 3 օր հետո՝ մարտի 6-ին, իսկույն նիստ է գումարում և հաստատում այն: Այդ մասին ասված է Ալեքսանդրապոլի գավառկոմին և պատճենը գեն. Խաչատրյանին ուղարկած ն. գ. մինիստրի մարտի 11-ի հեռագրում[45]:

Ինչ խոսք, Աղբաբայի, Զարուշադի, Չալդրի հիմնականում թաթարներով բնակեցված շրջանները, որոնք լավ զինված էին և ենթակա թուրքական, ադրբեջանական և մասամբ նաև վրացական գործակալների ագիտացիային, մեծ վտանգ էին ներկայացնում Հայաստանի համար: Դեռ 1919 թ. հոկտեմբերի 4-ին հետախուզական բաժանմունքի ժամանակավոր պաշտոնակատար կապ. Մուրադյանը զեկուցել է, որ «ըստ լուրերի Աղբաբայի, Սուրագյալի և Զարուշադի շրջաններում թաթարները շարունակում են կազմակերպվել և հանգամանորեն պաշտպանվել հայերի հանկարծակի հարձակումից: Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի էմիսարների կողմից թաթարական զանգվածը գրգռվում է Հայաստանի կառավարության դեմ: Աղբաբայի թաթարների մեջ ազդեցություն վայելող Յալբալա Մամեդ օղլին (Իբիգի գյուղի բնակիչ) կողմնակից է հայերի հետ խաղաղ գոյակցության և թաթարներին խորհուրդ է տալիս չենթարկվել տարբեր էմիսարների ազդեցության: Գավառական կոմիսարի հետ անձնական տեսակցության ժամանակ նա հավատացնում էր, որ թաթարները չեն մտածում ապստամբության մասին, իսկ զինված են ինքնապաշտպանության նպատակով: Թաթարների վերաբերմունքը տեղական հայերի նկատմամբ բավարար է, իսկ վերաբերմունքը փախստականների նկատմամբ՝ թշնամական»[46]:

Մենք դիտավորյալ ամբողջությամբ մեջբերեցինք կապ. Մուրադյանի խոսքը, որ ընթերցողն էլ համոզվի, թե որքան դյուրահավատ էին հայերը. թաթարները «զինվում են ինքնապաշտպանության նպատա-

[44] Նույն տեղում:
[45] Տե՛ս նույն տեղը, թ. 54:
[46] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 164:

կով»: Մուրադյանը ոչինչ չի ասում, մենք էլ ոչինչ չենք իմանում, թե գավառի կոմիսարը հարցրե՞լ է Յալբալա Մամեդ օղլուն, թե այդ ումի՞ց պետք է ինքնապաշտպանվեն՝ դավադիր հայերի՞ց, թե՞ մեկ ուրիշից: Մինչդեռ գեն. Փիրումովը նոյեմբերի 30-ին Կարսից հեռագրում է բանակի հրամանատարին. «ըստ լուրերի Աղբաբայի թաթարների առաջնորդ Քերբալայ Մամեդը, որը երկու ամիս առաջ եղել է Ադրբեջանում, ներկա պահին մեծ թիկնազորով այցելում է Աղբաբայի, Չալդըրի և Զարուշադի շրջանները, կազմում է զենք կրելու ընդունակների ցուցակներ, նախապատրաստում է ժանդարմներին և տեղական գնդերը: **Ցուցակագրվածները կրում են կիսալուսնով ուսադիրներ**»[47] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Ահա թե որքան հակասական են նույն մարդու մասին կապ. Մուրադյանի և գեն. Փիրումովի հաղորդումները: Գեներալը նոյեմբերի 26-ին էլ էր հաղորդել Ադրբեջանից Աղբաբա, Չալդըր և Զարուշադ էմիսարների ժամանման մասին, նրանց սադրիչ ագիտացիայի մասին քրդերի, թաթարների և մալականների մեջ՝ ընդդեմ հայկական կառավարության և այլն: Հետագայում ևս գեներալ Փիրումովը բազմիցս հաղորդում է վերը նշված շրջաններում թաթարական շարժումների մասին, բայց հոդվածը չծանրաբեռնելու նպատակով չենք ուզում այդ բոլոր հաղորդումները մատնանշել: Թերևս հիշատակենք միայն մեկը՝ փետրվարի 10-ի (1920 թ.) հեռագիրը, ներքին գործերի մինիստր Գյուլխանդանյանին, որում ասված է, որ «Կարսից գեներալ Փիրումովը հաղորդում է, որ Ինժիդարա, Շայնալար և Կարախաչ թաթարական գյուղերը մեծ ուժերով հարձակվել են հարևան գյուղերի վրա, ըստ որում վերջիններիս դրությունը հուսահատական է: Փիրումովը խնդրում է արտակարգ օգնություն: Կազմակերպել է հազար մարդուց բաղկացած հետևակ և հեծյալ կամավորականների ջոկատ»[48]: Հեռագրի վերջում ասված է, որ գեներալը խնդրում է միջնորդել ռազմական մինիստրի առաջ շտապ Ալեքսանդրապոլ ուղարկել 200000 մոսին տիպի փամփուշտ և մեկ միլիոն ռուբլի՝ ջոկատի կարիքների համար:

Ինչևէ, Աղբաբայի շրջանը Ալեքսանդրապոլի նահանգին հանձնելու մասին Հայաստանի կառավարության մարտի 6-ի որոշումից հետո փաստորեն դադարում են Կարսից հաղորդումները Աղբաբայի դրության մասին, առավել ևս, որ հաջորդ ամսին՝ ապրիլին, բանակցություններ են սկսվում Երևանում պարսկական հյուպատոսի հետ Աղբաբայի շրջանի 16 պարսկահպատակ գյուղերի բնակիչներին (շուրջ 9000 հոգի) Պարսկաստան գաղթեցնելու շուրջ: Ձեռք բերված համաձայնությամբ գաղթողներից 3000-ը պետք է մեկնեին երկաթուղով, իսկ մնացած 6000-ը՝ իրենց ամբողջ ունեցվածքով (սայլեր, անասուններ և այլն) Ալեքսանդրապոլ - Աշտարակ, Էջմիածին - Երևան խճուղով: Հայ զինվորներից բաղկացած պահակախմբերից բացի՝ գաղթողներին պետք է ուղեկցեր նաև պարսկական հյուպատոսարանի ստեղծած 100 հոգիանոց մի զինված ջոկատ: Հայ-պարսկական սահմանի վրա գաղթողները պետք է

[47] Նույն տեղում, գ. 110, թ. 21:
[48] Նույն տեղում, ֆ. 101, g. 1, գ. 48, թ. 16:

հանձնեին իրենց բոլոր զենքերը, արգելված էր նաև ոսկեղեն, գորգեր և ձիեր (թույլատրվել էր միայն 100 ձի) տանելը[49]:

Գաղթողների զինաթափումն ու գույքի ստուգումը կատարվում են օգոստոսին Բաշ-Նորաշենում, որի ժամանակ արտահանության համար արգելված իրերը բռնագրավվում են: Բայց այդ ընթացքում տեղի են ունենում նաև նախնական պայմանավորվածության որոշ խախտումներ: Օրինակ, զինաթափվել էր ոչ միայն գաղթականությունը, այլև պարսկական պահակախումբը, ինչը զենքի փոխադրության մասին կետի անորոշության արդյունք էր (պայմանագրում ասված էր, որ գաղթողներն իրավունք չունեն որևէ տեսակի զենք անցկացնելու սահմանից այն կողմ, մինչդեռ ոչինչ չէր ասված 100 հոգիանոց պարսկական պահակախմբի զենքերի մասին): Բացի դրանից, ժամանակի սղության պատճառով սայլերի մի մասը չէր ստուգվել, այլ գաղթողների համաձայնությամբ յուրաքանչյուր սայլի համար 4-5 հազար ռուբլի գանձելով՝ թույլ էին տվել անցնել սահմանը: Գաղթողներից բանակի համար գնվել էր նաև 130 ձի և այլն[50]:

Սահմանն անցնելուց հետո գաղթականները դիմում են պարսկական իշխանություններին՝ բողոքելով իրենց նկատմամբ հայկական իշխանությունների գործադրած բռնությունների ու հարկադրանքի դեմ՝ իհարկե, ինչ-որ չափով ուռճացնելով կատարվածը: Արդեն սեպտեմբերի 14-ին Երևանի պարսկական հյուպատոսը այդ կապակցությամբ գրավոր բողոք է ներկայացնում Հայաստանի կառավարությանը՝ միաժամանակ ներկայացնելով բռնության ենթարկված քրդերի և պատճառված վնասների բավականին ուռճացրած մի ցուցակ: Իսկ սեպտեմբերի 24-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին խիստ բողոք է ներկայացնում նաև Կովկասում Իրանի գլխավոր հյուպատոսը և պահանջում, որ Հայաստանի կառավարությունը բարոյական և նյութական գոհացում տա կատարվածի համար[51]:

Գոհացում տվե՞լ է Հայաստանի կառավարությունը պարսկական կողմին, ոչինչ հայտնի չէ: Արխիվներում ոչինչ չի պահպանվել:

Այսքանը, ավարտելով մեր խոսքը Կարսի մարզում քուրդ-թաթարական ընդվզումների և հակահայկական գործունեության մասին՝ ուզում ենք կրկին հիշեցնել, որ նախաձեռնելով այս հոդվածը՝ մենք մեր առաջ խնդիր չէինք դրել վեր հանելու ամբողջ կատարվածը, ինչը մի հոդվածի սահմաններում հնարավոր էլ չէ: Մեր նպատակն է ընդհանուր գծերով լուսաբանել այն ամենը, ինչ բնութագրական էր քուրդ-թաթարական շարժմանը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում:

ЭДИК ЗОГРАБЯН – ***Антиармянские выступления курдов и татар (азербайджанцев) в Карсской области в 1919 – начале 1920 гг.*** – После того как британское командование передало Армении Карсскую область, в её пограничных с Турцией, а затем и северных районах начались антиармянские выступления кур-

[49] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները, Եր., 1985, էջ 45:
[50] Տե՛ս նույն տեղը:
[51] Տե՛ս նույն տեղը:

дов и татар, инспирированные эмиссарами Турции и Азербайджана. Для успешной борьбы с ними армяне вынуждены были перебросить свои малочисленные войска, дислоцированные в области, из одного района в другой. В статье подробно показано, насколько несогласованно действовали в этих обстоятельствах армейское командование и руководство Карсской области.

EDIK ZOHRABYAN – ***Kurds' and Tatars' Anti-Armenian Activity in Kars Region in 1919 and in the Early 1920s.*** – It is illustrated in the article that after the transfer by the British command of the Kars region in Armenia, in areas bordering with Turkey (Sarighamish, Kaghzvan, Merdenenk, etc.) and then in the northern parts of the region (Aghbaba, Zaryshad, Chalder) began Kurdish and Tatar anti-Armenian movements, instigated by emissaries from Turkey and Azerbaijan. It is also illustrated that for successful fight against Kurds and Tatars the command of Armenian troops discarded in the Kars region had to throw their numerically small forces from one region to the other. No less important role is also given to uncoordinated actions of the command of Armenian troops and government of Kars region.